



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ՏԱՍԸ ԿՈՒՄԱՆԱՅ ՕՐՈՒՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ**

**ՏԵՐԸ ՄԵՉ ԿԸ ՀՐԱԻՐԵ ԻՄԱՍՏՈՒՆ ԿՈՅՍԵՐՈՒՆ ՕՐԻՆԱԿՈՎ  
 ՄԻՇՏ ԱՐԹՈՒՆ ԸԼԼԱԼՈՒ**

*ԸՍԱԲ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ*

Համաձայն մեր եկեղեցւոյ տօնակարգին, Աւագ Շաբթուան Երեքշաբթին նուիրուած է մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի առակներէն Տասը Կոյսերու դրուագին, որ զգօնութեան ու արթնութեան պատգամ մըն է հաւատացեալին:

Այս առիթով, Երեքշաբթի երեկոյ, 3 Ապրիլին, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ յատուկ արարողութիւն: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան այցելեց Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցին եւ նախագահեց արարողութեանց: Ներկայ էին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներն ու Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներ:

«Այսօրուան խորհուրդը մեզ կը հրաւիրէ իմաստութեամբ հաւասարակշռուած կեանք մը ապրելու. եւ ինչպէս որ Աստուածաշնչական ընթերցումները մեզի կը հաղորդեն, թէ Նոյը, արդար եւ մաքուր կեանք մը ապրելուն շնորհիւ, Աստուած փրկեց զինք, նոյնպէս ալ այսօր Քրիստոս կը հրաւիրէ մեզ իմաստուն կոյսերուն օրինակով արթուն ըլլալու», ըսաւ Առաջնորդ Սրբազանը իր պատգամին մէջ եւ խօսքը ուղղելով կիրակնօրեայ դպրոցի տասը աշակերտուհիներուն, որոնք կը ներկայացնէին առակին տիպարները՝ շարունակեց. «Դուք այսօր ոչ միայն ձեզ, այլ նաեւ մեզ կը ներկայացնէք. այսօր, բոլորիս յիշեցում մը կը կատարուի այս արարողութեան ընդմէջէն, որ իմաստուն կոյսերուն նման պատրաստ ըլլանք եւ ճշմարիտ հաւատքով սպառնազինուած, ապրինք օրինակելի ու անբասիր կեանք մը»:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Կիրակնօրեայ դպրոցի աշակերտուհիներն ու տեսչութիւնը, ապա, Տերունական աղօթքի հաւաքական երգեցողութեամբ Աւագ Երեքշաբթիի Տասը Կուսանանց արարողութիւնը իր աւարտին հասաւ:

**DURING THE COMMEMORATION OF THE TEN MAIDENS**

**THE LORD INVITES US TO ALWAYS BE READY  
AS THE WISE MAIDENS WERE**

*DECLARED THE PRELATE*

In accordance with our church calendar, Holy Tuesday is dedicated to the parable of the Ten Maidens which teaches the faithful to be ready and prepared at all times.

Evening services took place in all Prelacy churches for this occasion on Tuesday, April 3<sup>rd</sup>. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over services at St. Mary's Church in Glendale.

In his message the Prelate states, "The message today is to live a balanced life and to live wisely. Just as the Bible tells us how God saved Noah for living righteously, our Lord Jesus Christ invites us to be ready like the wise maidens." Addressing the ten Sunday School students who represented the maidens in the parable the Prelate said, "Today you represent all of us. Through this service we are reminded to be prepared in the example of the wise maidens and to live a virtuous life armed with true faith."

The Prelate highly commended the students and directors of the Sunday School and concluded the service with the Lord's prayer.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org), Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.